Ծուշանիկ Կուրղինյան

Դուք հաց մուրացեք

Կրկին սովալլուկ, կրկին մուրացկան,
Անհաց ու անտուն ձմեռվա պահին .
Կրկին ձեզ համար վայելքներ չկան,
Ձեռք եք կարկառում անսիրտ աշխարհին:

Ա՜հ, թշվառ սերունդ, ստրուկ հոգիներ,
Ոճրագործ ուժին քծն<ելու> սովոր,
Որ ծանրակշիռ բեռին միշտ ընկեր
Ծծել եք տալիս հյութերդ բոլոր:

Չէ՞ որ շատ անգամ պարզած ափի մեջ
Կոշտ քարի կտոր դուք շոշափեցիք,
Չէ՞ որ դարերով հրաշք երկնաէջ
Անարգ, սողալով իզուր հայցեցիք:

Եվ անտարբերության գարշելի ճահճում
Գեթ կուշտ լինելու չեք արել ոչինչ .
Խղճուկ ու վախկոտ՝ քան տկար ճիճուն,
Բարբարոս կյանքին տվել ամեն ինչ:

Կրկին աղեխարշ լացե՛ք, մուրացե՛ք,
Կուշտի սեղանից չնչին փշրանքներ,
Կրկին վաստակած ձեռքերդ բացեք,

Որ նետեն ձեզ այն, որին դուք եք տեր:

Դեռ ձեզ չի հասել վերածնության
Ահեղ ցնցումի կայծակն ու որոտ .
Դո՛ւք, որ կուրորեն սիրեցիք շղթան՝
Դուք հաց մուրացիք միշտ գծուծ, բոկոտ . . .

1907 թ. 8 հոկտեմբերի